

## ՊՈԼՍԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ



**ՀԱՅՈՑ ՆՈՐ ՀԱՅՐԻԿԸ.** — Հայոց համար՝ Թուրքիոյ Սահմանադրութեան իբր առաջին արդիւնք իզմիրլեան Սրբազանը Պոլիս տեսնելն էր, Հայութիւնը խրթման Հայրիկին յար և նման գտնելով անոր զգացմունքն ու հայրենասիրութիւնը՝ իր տարիներով զսպած սէրը առ այս տարագիրը՝ գուրս կը ժայթէ հազարաւոր սըրտերէ։ Թուրքիոյ Մայրաքաղաքը անկարագրելի և փառապանծ պատիւներով ընդունեցաւ իզմիրլեանը՝ 100,000 հոգիներէ. պատիւ մը՝ որ ինքնաբերաբար զլացուած էր նոյն իսկ Գերման. կայսեր և. Պոլիս ժամանելուն 20 է աւելի շուգենաւներ՝ ընդ առաջ զացին «Նիժէր» շոգենաւին՝ դիմաւորելու և ողջունելու համար իւրկաթէ պատրիարքը։ Գէպքը մասնական ընտանեկան էր, որ ընդհանուր և վսեմի փորձեցաւ։ Այդ խանդավառութեանց և ծափահարութեանց օրը՝ յիշատատակելի մեծ զուգադիպութիւն մըն ալ։

«Այն պահուն, — կ'ըսէ Սուրհանդակ — երբ իզմիրլեան Սրբազան մուտք կ'գործէ Պոլիս, 12 տարի առաջ նոյն պահուն իզմիրլեան Սրբազանի հեռացումը կը վճռուէր։ Այն պահուն երբ հազարաւոր բերաններ կեցցէներով կ'ընդդաշնեն օդը, 12 տարի առաջ նոյն ժամուն ինդը Հայոց դիակները կը փոխադրուէին Շիշլի և Պալլադը։ — Այն պահուն երբ Թուրք հայրենակիցներ Հայութեան սիրեցեալ Հօր դիմաւորելու կ'երթան, 12 տարի առաջ նոյն միջոցին աստիճան և սրտմտութեան ցոյցեր կ'ընէին Հայութեան դէմ։ — Այն ժամուն երբ ամէն մարդ խուռներամ կը վազէ մեծարանաց արտայայտութիւն մ'ընելու, 12 տարի առաջ նոյն պահուն ամբողջ կը վազէր հոս իր կեանքը փրկելու և ապաստանի համար վայր մը գտնելու համար»։

Այս. նոյն օրուան ցնծութիւնը՝ մեծ մասամբ կը ջնջէր 12 տարի առաջուան տխուր յիշատակները։

— **ԻՇԽԱՆ ՍԱԳԱՆՔԻՆԻ ՄՈՒՏՔԸ.** — Արժանաւայել և փառահեղ մուսք մը կ'ունենայ նաև այս հայրենասէր Արքայազունը, որ ազա-

տութեան դատին պաշտպան ժէօն Թիւրքերուն պետն է։ Գիմաւորուած է անհուն ծափերու և կեցցէներու մէջ՝ Թուրքիոյ պատկանեալ զանազան ազգերէն։ Բոլոր կուսակցութիւնք առանձին շոգենաւներով, և Հայոց կողմանէ 5 դրոշագարդ շոգենաւներ ընդ առաջ ելեր են, իշխանը՝ յաղթական՝ Պոլիս մտցնելու համար։ Մեծազարմ Սապահէտտին «Ահնեկալ» շոգենաւով ճանապարհորդած է մինչև Տարտանէլ, ուր Օսմանեան Գոմիդէին և այլ կուսակցութեանց խնդրանքին զիջանելով՝ «Բրինձիբէսա Մարիա» կը փոխադրուի, որուն մէջ իրենք կը գրտնուէին։ Իշխանին աչքերը՝ սաստիկ յուզումէն կը լեցնուին արտասուօք, երբ կը տեսնէ ժողովրդական խանդավառութիւններն և անոնց անկեղծ ցոյցերը։ Բերած է իր հետ՝ իր հօր Տամատ Սահմաւոր փաշային աճիւնները, զոր ապա ամփոփուր են էյուպ մասնաւոր դամբարանի մէջ, որուն կափարիչը զարդարած են այժմ օրտերէ ձօնուած զանազան գեղեցիկ ծաղկեպսակները։ — Իշխան Սապահէտտին այժմ գրեթէ 33 տարեկան է։

— **ՎԻՀԱՊԵՏՆԵՐԷ ՆՈՒԷՐ Ի ՆՊԱՍՏ ՀԸՐԿԻՋԵԱԼՆԵՐՈՒՆ.** — ՎԷՆ. Սուլթանը 5(10) ոսկի։ Կայսերական իշխաններու և իշխանուհիներու կողմէ 2000 ոսկի։ — Անգլիոյ Նաւաւոր Թագաւորը 500 ոսկի։ — Գերմանիոյ Վիլհելմ կայսրը 10,000 մարք։ — Նախագահ Մ. Ֆայլէն 10,000 ֆր.։ — Իտալիոյ Վիկտոր Էմանուէլ Գ. Թագաւորը՝ 25,000 ֆր.։ — Ալբանիոյ Ֆիառնց Եղգեթ կայսրը՝ 15,000 քուռոն։ — Աւստրիոյ — Հունգարիոյ կառավարութիւնը 40,000 քուռոն։ Պոլսոյ Գերմ. դեսպան Պ. Մարշալ՝ 150 ոսկի։ Իտալ. դեսպան 150 ոսկի. դեսպանուհին 300 ֆր.։

Բացի շատ մը մասնաւոր ցանձնախուժներու յաջող հանգանակութիւններէ և անհատական նպատակներէ՝ Պոլսոյ անգլ. զաղթականութիւնը նպաստամտօրց ցանձնածոցով մը կազմելով դեսպանին նախագահութեամբ՝ որոշած է որ թէ ի Պոլիս և թէ յԱնգղիա հանգանակութիւն մ'ըլլայ ի նպաստ հրկիզեալներուն. առաջին անգամ 300 ոսկի հանգանակութիւն է։ Նոյն նպատակաւ Իտալիոյ դեսպանին հովանաւորութեամբ կազմուած մարմին մը նպաստ կը հաւաքէ։ — Մինչև Օգոստ. 19ը ընդ ամէնը հաւաքուած է 1,225,023 դրը։

— Կայսերական Իրատէ մը հաստատուէր է Նախարարաց որոշումը՝ փողբառնոցին մէջ Սահմանադրութեան չքաղաքումներ պատրաստելու համար. որոնց վրայ իբր յիշատակ պիտի գրու-

նուի հետեւալ նկարը — արևի ծագումին և ճառագայթներուն մէջտեղէն՝ հետուէն օսմ. զի նուրենքի՝ փողերով, թմբուկներով և սուրնենքով. կաղապարը պատրաստեք են:

— Ազգային Սուգի օրերուն, այսուհետև պէտական պաշտօնատունները իրենց դրօշը կէս պիտի պարզեն:

— Երուսաղէմի Թուրք Գոմիդէն՝ Հայ նախատակաց հոլակոյտին վրայ դնելու համար ծաղկեպտակ մը զրկեք էր Իզմիրեան Սրբազանին հետ՝ իբր պապացոյց եղբ. սիրոյ և յարգանաց. այդ սգանդանդէտ տեղի ունեցեր է (Սոստ. 16 ին. և Իզմիրեան Արքեպ. ք. անձամբ գրեք է ծաղկեպտակը, որ Թուրք լեզուով սա վերև տառութիւնը կը կրէ: « Երուսաղէմի Օսմ. Միութեան և Զառաջադիմութեան ընկերութեան կողմէ նուէրական յիշատակ մը, Կ. Պոլսոյ մէջ 1896 տարւոյն ծանօթ դէպքին ինկած հարստահարելու ու անմեղ Հայ հայրենակիցներուն »:

— Իրաւամբ մեծ զովեստով կը գնահատուին դարձեալ անձնանուէր զգացումները զոյգ մեծ հերոս — Էնվեր և Նիազի պէյերուն, որոնք հեռազրաւ իմացուցեք են՝ թէ շինուելիք երկու յաւանաւերուն համար եղած հանգանակութեան արգիւնքը՝ յատկացուի ֆաթիհի Հրկիզեանին ուն:

## ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ

Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ. — Փառութեան (Տախը կամ Ռմանեանի) Պատրիարքութիւնը. Տրտրկ. « Ազգ. թիւ 1. Պոսթոն 1908. զին 25 սէնթ. ճանապարհանքով » 30 սէնթ:

ՍԻՄՈՆ ԳԱՐԵԱՄԱՆԻԱՆ. — Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս Ս. Արքեպ. Իզմիրեան. Բարձրաշնորհ Տ. Եղիշ Ս. Եպ. Գուրեան (Կնեսաւ գրութիւն). Պոլիս 1908. զին 2 զրշ:

Տ. ԶԱԽԷՆ. — Թուրք Սահմանադրութիւնը և Երիտասարդ Թուրք կուսակցութիւնները (« Եր. կրի 2այնի » Գրադարան N. 1). Թիֆլիս 1908. տպ. « Էպօխա ». զին 20 Կ.:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ. — Ազատութեան Զաղթանակը. (Յաւելուած « Անահիտ » ի). Փարիզ 1908. տպ. Տ. Տօղրամեան:

ԼԵՒՈՆ ԼԱՐԵՆՅ. — Դրախտի երգեր. Թիֆլիս 1908. տպ. Օր. Ն. Աղանեանցի. զին 30 կոպ. — 4 զրշ:

Ա. ԴՕ. — Ազատագրական շարժումը Ռուսաստանում իր ծագման առաջին օրերից. Երևան 1908. տպ. « Լոյս » Արշակ. Յակոբեանցի և Որդիք. զին 80 Կ.:

Հ. և Զ. ԱՍԱՏՈՒՐ. — Թանգարան Հատընտիր Հատուածներու Արձակ և Ոստանաւոր. Միջին դարերից. Պոլիս 1908. Տպ. Յ. Մատթէոս.

սեան. Հրտր. Նոր Գրատան Ա. Պ. Եազըճեան և ընկ. զին 6. զրշ:

ՆՈՐ ՓՈԽԻՋ. Գրքոյկ ընթերցանութեան պատկերազարդ. Պոլիս 1908. (տպ. և հրտրկ. տես վերը). զին 1 զրշ:

Գ. ԳԱՎԱՅԵԱՆ. — Տարրական Թուաբանութիւն մտաւոր և Գրաւոր. Ա. և Բ Տարի. Պոլիս 1908 (տպ. և հրտր. տես վերը):

ՔՐԸՐ ՊԵՂ. — Ճէյն Էյթ. թրգմ. Մարինոս Հ. Ստամբուլլեան. Պոլիս 1908 տպ. Յ. Մատթէոսեան. Հատոր Ա. զին 4 զրշ:

— Հատոր Բ. զին 4 զրշ:

ԿԼԵՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ. Նոր Զուրա Սպահան 1908:

ԺԻՒՂ ՎԵՐՆ. Գրանտ հաւաքեալ Որդիք. Մասն Բ. (« Պատանեկան Գրադարան N. 10 ») Պարու 1908. զին 30 Կ.:

## LA COLLECTION KELEKIAN

### *Etoffes et Tapis d'Orient et de Venise*

Notice de M. Jules Guiffrey membre de l'Institut Administrateur de la Manufacture National des Gobelins — Cent Planches reproduisant les Pièces les plus remarquables de cette collection décrites et classées Par M. Gaston Migeon — conservateur d'objets d'art du Moyen Age et de la Renaissance au Musée du Louvre.

Paris Librairie Centrale des Beaux-Arts. Emile Léry, éditeur.

Սոյն նշանակալ Հուսարմոյէն օրինակ մը նուկրեց մեր Մատենադարանին վրայ. Տիգրան խան Գէլէկեան, որուն նրապարակուած իր յայտնեք մեր խորին շնորհակալութիւնները:

## ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1908 թ.

### « ՄԵՐ ԶԱՅՆԸ »

Հասարակական, Գրական եւ Քաղաքական օրաթերթ  
Բաժնաւորագին է  
Տարեկան 6 ր. — Արտասահման 10 ր.

Գիմի

Rédaction du Journal « Mer Dzaïn »

(Russie)

NACHITCHEVAN

(Sur Don)